

ԱՌ ՀՈԳԵԶՈՒՄԻՔ Կ-ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՊԱՏԻ ԵՒ ԳԵՐԵԶԱՆԻԿ ՏԵԱՌՆ ՏԵՍՈՆ ՊՕՂՈՍ ՊԵՏՐՈՍ ԺԳ.ԹԵՐԶԵԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԱՐԺԱՆԵՆՏԻ Կ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԱՆՆ ԿԵԼԵԿՈՅ

ՆԵՐԲՈՂԵԱՆ

Յեռուայ նման աղաղակեմ, կայ ի վայրիդ, քաղցր արեգ,
Բերկանայ մեր, բեր մաղթանայ չէ շատ, այո՛, մի ցերեկ,
Օ՛ն արդ յերկնաւոր լերուք վկայ հոյք հրեշտակաց, Բերովբէր,
Առ Արարիչն ամենեցուն տարէք զանկեղծ բանքս հէգ։

Դաւարացան դաշտը և բլուրը, ծաղկեցան ձորք և լեռինը,
Խնդաց երկիր համատարած, խայտաց վերուստ և երկինը
Հայտատանայց հովիւն անդէն հնչեցոյց փոյթ զեր սրինգ,
Բերկրապարար ի լուր զուարթ՝ հրճուեցան աղբ և աղինը։

Գեղեցիկեցէ օ՛ն արդ, սոսակը ըզուրը Օծուան Պետին՝
Որ իբր արեւ լուսածաճանչ ել յերեւան կաթողին.
Առատահոս պէս պէս շնորհս երկինը ի նա տեղացին,
Կենդանացի Աղբ իւր ողջոյն, պանծացի սէրն և ոգին։

Ոսկետուն զինչ վարսաւոր մատամբ ցուցի վեհ, հզոր,
Լոյս իւր պայծառ վերայ Ազգիս շողողացի օր քան զօր.
Եւ համայնը իւր, մի սիրտ, հոգի ծափոս հարեալ զօրաւոր՝
Գոչեցին միշտ, կեցցէ՛ ի խնդ երկար ամբ սուրբ Պետ նոր։

Արեգ, լուսին նշողեցին ի նա յաւերժ աստ ի վայր,
Անուշահոտ իւր վարդ նոր՝ փայլեցի օ՛ն վառ ի վառ.
Եւ բուրեղեց ամբարձուղէ՛ իբրեւ շուշան վեհաբառ,
Չինչ մի պսակ, մի ծաղկեայ փունջ՝ հանցէ ի տես զԱզգ մեր յար։

Ձայս խուն մաղթանքս հովուականիդ՝ փոքր ինչ նուէր զերդ մի վարդ՝
Ձօնէ՛ նուաճաս անգոր գրչաւ՝ փնջոյ վեհիդ բարդ ի բարդ,
Լնկայ ո՛ հայր, զայս խուն մի ձօն՝ ի բեր ծաղկունադ առ ի զարդ,
Տուր օրհնութիւն որդւոց Պետիդ, արա ընտա չէն զուարթ։

Երախտագէտ Ն. Ծ.
ՄԿՐՏԻՔ ԹԻՒՓՈՅԷԼԵԱՆ

Տրապիզոն, 3 Յունիս 1910

այլ ընդհակառակն. այլ մոխրոյ տակ թող-
ուած կրակի արծաթումն է, վերադարձ-
նող ժողովուրդի մը գիտակից ոգին իր
նախնեաց պատմութեան և ապագայ բար-
գաւածման, որ կը հրճուի, ի գլուխ կանգ-
նած տեսնելով այն քարձրութեան վրայ
ուսկից փրկութիւն կը յուսայ. Մովսիսա-
նման Սուաքնորդ մը, Կիլիկիոյ Տան ընտ-
րութեան Անթիոյ, Տարսնեան փողը, Ա-
ւետարանական Բաշ Հովիւը. անոր շուրջ
համախմբուած կզեր և ժողովուրդ մի հօտ
և մի նովիւ պիտի քայլին դէպ ի լոյս,
դէպ ի զարգացում, դէպ ի երջանկութիւն։

Որոհորաւոր է այս օրս և փոքրիկ ման-
րանկարը նոր օրինակ ապագայի մը, որուն
մէջ այժմէն կը կարգանք ցաւեր դարմա-
նող և ուրախաթիվ դէպքերու շարք մը,
վասն զի ուր կայ միութիւն՝ հոն կայ ոյժ
և յաջողութիւն։ Նախնայականութիւնս ու-
նի այսօր արժանի գլուխ մը իր բարձրու-
թեան համապատասխանող, և անոր լուրջ
աղիւցեցութեան ներքեւ անդամները պիտի
գործեն իրենց օճաններն մէջ, վստահ լի-
նելով թէ կայ ներքին սերտ յարաբերու-
թիւն մը Գլխոյն և անդամոց մէջ։ Ձեր
Հայրական սիրտն պիտի զգայ ինչպէս մին-
չեւ ցայսօր ժողովրդեան հոգեւոր թէ մարմ-
նաւոր ուղեքն ու կարօտութիւնը, և ժո-
ղովուրդը գոհունակութեամբ պիտի հետե-
ւի և օգտուի Ձեր ժողովրդասէր արա-
մադրութիւններէն, որոնց գովելի արձա-
գանքները պատմութիւնը պիտի հասցնէ
ապագայ սերնդեան՝ Ձեր վեհ. Անձնաւո-
րութիւնը ցնցելով ի՞նչ մին մեծ գործիչ-
ներէն։ Երկինք երկայն ընկն Ձեր Հայ-
րապետական շրջանը և զօրացնեն Ձեր բա-
զուկը և մենք խանդավառ գոչենք այսօր
և միշտ կեցցէ՛ Ամեն. Գեորգի. Տ. Պօղոս-
Պետրոս ԺԳ. Թերզեան, Կաթողիկոս Պատ-
րիարք Տանն Կիլիկիոյ։

Տ. Տր. Անտոն Է. Թ. Թաւմաշեան թա-
րափնտան իրատ օլունան նութզն սու-
րէթի տիր։

Ամենապատիւ և Գեորգիանիկ Հոգեւոր Տէր,

Թէպէտեւ պաշտօն մը չունիմ իբրեւ
ներկայացուցիչ պատուարժան ժողովոյ կամ
խմբակի մը կողմանէ խօսելու, սակայն թէ՛
իբր ազգային անհատ և թէ՛ շատ մը ինձի
զապափարակից ազգայիններու իբր թարգ-

մանը փափաքեցայ հակիրճ խօսքերով սր-
տիս անկեղծ զգացմունքը արտայայտել։

Հասարակութիւնս 11 տարի յառաջ կը
տեսչար Ձեր Երանութիւնը Կաթողիկոսա-
կան Գահուն վրայ բազմած տեսնել. աս-
տուածային Նախնայականութիւնը սակայն
այլազգ արամաբեց որուն մենք կամայ
ակամայ հպատակեցանք։ Ձեռ ուղեր աստ
Նախնայականութեան կարգադրութեանց
խորամուկ ըլլալու ջանալով՝ գաղտնիքն
ու պատճառները հետազոտելու ձեռնար-
կել. անտարակոյս կարողութեանէս վերէն
այս, թէեւ ի՛նչ ի՛նչ պատճառներ՝ անց-
եալ 11 տարիներու շրջանը բաւականաչափ
պարզած ըլլայ։

Գլխաւոր տեսակէտն էր Հասարակու-
թեան՝ ունենալ ճշմարիտ կրօնասէր և
ճշմարիտ ազգասէր Հովիւ մը որ կրնով
հայրական գործադրութիւն սիրտ մը ճոխա-
ցած մտաւորական աշխոյժով, աշխատէր
անձնութեամբ, աշխատասէր եղանակաւ,
զիշեր ցերեկ, իւր հօտին զարգացման ու
բարեաւածմանը։

Ճշմարիտ ազգասէր, ճշմարիտ կրօնա-
սէր Հովիւ մը, Հայրապետ մը, օտուտայ
մտաւորական ու գործունէութեան ձիր-
քերով, արդարապէս, իւրաքանչիւրին
իւրը տուող. ո՛րքան հազուադէպ են այս-
պիսի անձնաւորութիւնք որոնց վրայ սոյն
բարեմասնութիւնները միանգամայն կեղ-
բոնացած տեսնուին։

Մենք, Ամեն. և Գեորգի. Հոգեւոր
Տէր, համոզուած գոյացուցած էինք Ձեր
անցուցած քահանայական կեանքէն և ա-
ռաքելական գործունէութեանէն հետեւեցե-
լով, թէ Դուք ճշմարիտ կրօնասէր Հովիւ
մ'է՛ք՝ առանց կրօնամոլութեան որ կրօնա-
տեսութիւն կը ծնանի, ճշմարիտ ազգասէր
Հայ մը՝ առանց ազգամոլութեան որ յա-
ճախ զիւսներ կը պատճառէ, զարդարեալ
աստուածատուր ձիրքերով, թէ՛ Դուք
արժանի էք Հասարակութեան զուր
կանգնելու և ձեռք ձեռքի տուած, եկե-
ղեցական դասուն ու ժողովրդեան աջակ-
ցութեամբ, կառավարելու զմեզ ի յառա-
ջագիտութիւն և յարախոսութիւն ընդհան-
րութեան։

Սյոյր մեր այս իշգը լրացաւ, ուրախ
եմք անհունս, փառք կուտամք յերկնից
իդրին. Կը խնդրեմք ի Բարձրեւոյն որ

հազարապատկէ Ձեզի շնորհաց հազուա-
դիւտ ձիրքերը, երկար կեանք և անսա-
սան առողջութիւն պարգեւէ, լուսաւորէ
Ձեր միտքը այս ծանր և դժուարակիր
պաշտօնին խնդիրուն մէջն անսայթաք
անցնելու։

Ինչպէս որ հազարաւոր հոգիներ Ատա-
նայի մէջ պարտական են այսօր իրենց նիւ-
թական կեանքն անգամ Ձեր Երանութեան,
ինչպէս որ ճշմարիտ հայր և անձնուէր հո-
վիւ մ'եղաւք անոնց, կը մաղթենք յոր
նոյնպէս ալ մեր Հասարակութիւնն և ամ-
բողջ Հայ ազգը ընդ միշտ երախտապարտ
ընէք Ձեզի, Ձեր աստուածահաճոյ ազգօ-
գուտ գործունէութեամբ և ցրուած, պա-
ղած սիրտերը միաւորելով հովուական գա-
ւադանին և հայրական հովանւոյն ներքեւ։
Կեցցէ՛, կեցցէ՛ ընդ երկար մեր սի-
րեցեալ Հայրապետը, կեցցէ՛, կեցցէ՛, յա-
մայր ամս Ամենապատիւ Թերզեան Կաթո-
ղիկոս-Պատրիարքն մեր...։

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԸ

Պատիւ ունենալով գանուիլ այս օլերս
ի հոյակապ մայրաքաղաքս և լինելով հիւր
ի Կաթողիկոսարանի Սեզին առ օսոս նոր-
նտոր Գեորգի. Կ-Պատրիարքին, ի մէջ
Ար. Վիճակաւորաց Նախնայականութեան
Հայկազեան Եկեղեցւոյս և շուրջ պատեալ
ի պատուան Գեոր. Կղերց Աղլին և ի յա-
կանաւոր անձնաւորութեանց ժողովրդեանս՝
խմայայ ըստ բաւականի առաջին խոշըն-
դոտն յառաջդիմութեան Հայ-Կաթողիկէ
Սեզին, այս է՝ իւր նիւթական կարօտու-
թիւնն և զբաւական պակասութիւնն։
Պատրիարքարանս կը գանգատի իւր պար-
տուց ծանր բերման համար, այս է կ'ըսէ՝
մին յերեսփոխանաց Աղլին, սուաջին ար-
զելք որ կ'ըլլէ պիտի բարեացակա՛ն նորն-
տիր Կ-Պատրիարքինս առջեւ, եթէ՛ կը
կրնին նոյն. անձը այս պարտքը չվճարէ նէ
ինչպէս կարողանայ պիտի յառաջ երթալ.
ոչ դպրոցներու և ոչ ուրիշ բարի հաստա-
սութեանց մտադիր կորուղ է ըլլալ. Կը
յուսահատինք քալ և արթնուն Վիճակաւորք
իրենց ինքնուր բարի կրթութեան զարկ
մը տալու և տեսնելով ձեռքերին ունայն
ի զբաւական օգնութիւնէ. ա՛լ իրենց վե-
հանձնութիւնը իրենց թոյլ չտար երթալ
օտարազգի մեծ անձնաւորութեանց գլուխ
ծրել և անկէ պարագ կ'ըլլէ կամ չնոյն
բանով անոնց ծանր ծանր երախտեաց բե-
ռան տակ մնալ ցփշտ. կը քրթմնջեն դա-
ւառական ժողովրդապետը չկարենալով ի-
րենց բուն պաշտօնին յապատակին համեմ.
վասն զի իրենց կարօտութիւնն կ'ստիպէ
զիրենք երբեմն երբեմն պաշտօնէն. դուրս
այլեայլ գործոք հետամուտ ըլլալ. Ուստի
ասոնց ճար մը, դարման մը չկայ՝ արդ-
եօք. այո՛, կայ և կայ. ան ալ շատ դիւ-
րին է և որով այս գանգատը կը վերցուի.
շատ յարմար՝ որով այս հիւանդութիւնը
կ'անհետանայ. մինակ թէ հաստատ կամք
մը, բարի գիտաւորութիւն մը ունենանք
մեր յառաջդիմութեան։

Արդ՝ համարձակաբար կը զրուցեմ. մեր
Հայ Կաթողիկէ հասարակութիւնն՝ որ կը
վերաբերի Կիլիկիոյ Պատրիարքութեան,
առ հասարակ միջին հաշուով կ'ըլլէ հարիւր
երեսուն հազար հոգի, արդ թէ՛ որ այս
բաղութեան իւրաքանչիւր անհատին
վրայ պարտք մը դրուի որ չարաթիւ ըւր
ազգին իբր օգնութիւն ՏԱՍԸ բարայ տայ,
կարծեմ թէ մեծ գումար մը մէջ կը բերէ,
և կարծեմ թէ չկայ անձ մը, մեծ ու պղծ-
տիկ, հարուստ ու աղքատ, այր և կին,
որ չկարենայ այս չնչին օգնութիւնը ը-
նելու. Ամեն կողմէն ձայն կուգայ ականջս
թէ միթէ կայ մէկը որ աս ալ չկարենայ
ընել. անոր համար ես կ'ըսեմ աչքերնիդ
լոյս, սրտերնիդ ու բախտնայ թող. ահա՛
այս կերպով ձեր Պատրիարքին Ամոռոյն
պարտեքն կը վճարուին, ինքնուր կարօ-
տութիւններն կը լեցուին, զբարոյններն կը

բացուին, նոր նոր բարի հաստատութիւն-
ներ ի մէջ կ'երեւան, ուրիշներու կարօտ
չըլլանիս բարձրագլուխ կը պարծենանք,
աղքատներն կը կշտանայ, մերկերն կը
ծածկուին Ուստի առէ՛ք ձեզ այս փոքր
և չնչատակելիք օգնութիւնն տարուէ
տարի գումար մը՝ որ ձեր աչքին ալ մեծ
երեւոյս պիտի։

Հարիւր երեսուն հազար հոգի երթալ-
րեցինք մեր Հայ Կաթողիկէ հասարակու-
թեան թիւն, թէ որ իւրաքանչիւր ոք
չարաթիւ չարաթ ՏԱՍԸ բարաւոյտու ըլ-
լայ, ստորին կը գումարէ մէկ միլիոն վնգ
հարիւր իննսուն հազար դանկան այսինքն
սասն և ինկզնազար վեց հարիւր խաւասուն
մեկ օսմ. ոսկի. Սրդ հարցնեմ. չկրնա՞ր այս
մեծ գումարը ձեր կարօտութիւնը լեցնել
մի Կաթողիկէ Հայ հասարակութիւն.
այո՛ կը լեցնէ. մինակ թէ միաբան միա-
շունչ այս գործիս ձեռք գարնենք. մի
կարծէք թէ առաւել մը ձեռք կը նկարո-
գրեմ կամ անկարելի մը ձեր առջեւն կը
դնեմ. ո՛չ, ձեզմէ յուսով ուրիշ ազգեր ա-
սով յառաջացան, ասով հարստացան, ա-
սով մեծամեծ տէրութեանց գլուխ ան-
ցան. ձարոնցոց տէրութեան հարստու-
թիւնը այս ճամբով գումարուեցաւ. Դադ-
ղիոյ պանքին ոսկւոյ տառտութիւնը այս
կերպով եղաւ. հարցուցէք Հոռոյ Ս.
Պետրոսի եկեղեցւոյն թէ տարուէ տարի
ի՛նչ մեծ գումարներ կը զրկուին իրեն յա-
նուն բնիօն Ս. Պետրոսի. մեզի պէս ու-
րիշ արեւելեան կաթողիկէ ազգեր ա՛լ նոյն
կերպով իրենք զրկենք կը կառավարեն,
ինչպէս է Մարոնցի ազգը, տարուէ տարի
պարտական է, իւրաքանչիւր ոք որոշ գու-
մար մը տալու իւր Վիճակաւորին, որ
Պատրիարքական Աթոռոյն հասցնէ. ասով
կը տեսնենք իրենց Պատրիարքին, իրենց
Եպիսկոպոսներն մէյ մէկ աւելայ են տե-
ղերն. չիշեմ մեր ուրիշ քրոջի արեւել-
եան ազգերն՝ որ միշտ իրենց կարօտու-
թիւնն իրենք իրենցէ կը լեցնեն. Ուստի
ինչու մենք յետնորդ մնալք պիտոր. չէ՛,
կ'աւաշեմ արթնանք, ոտք կ'ընենք, գոր-
ծի սկսինք. այս է առաջին և վերջին դար-
ման մեր ներքին հիւանդութեան և անկէ
զատ ուրիշ ճար մը չունինք։

Բ. Վ. ԳԱԼԻՈՆՉԵԱՆ

Մեծամուս. Պէտրոս Էրմանի-գաթո.
իւր Կ-Կաթողիկէ վեթիկ օլուպ, միշտարի-
ւէյն թէ չեկին չէնթիմիք կ'ըլլէ օլուն
Գեոր. Բարսեղ Մ. Վ. Գալստեաններն պու-
միւթալեալ, լիսանընդ ստուէլէլիյէ պէ-
րագէր բէք մօճիմով վէ շայնանը տիգգաթ
տըր. Իշպու միւթալա վէ թէլիֆին, ճէ-
հաթիլմըլճա ճիտալն նազարը տիգգաթա
ալընմասըն արդու իաթիլդ. Անճադ
պիր նօզթա վար արը քի, օրստը խա-
թըրտան չըլլամալը տըր. Սահի տիր քի
օն քարաշար իլէ միւթալար հաղը օլուն,
վէ սլու միւթալար, պիր ճէմաթիլ, տիւ-
շարը մուգաթաթ իլմէլթիլիլի վէ խարիճէ
չուրաթա պուրաթա ալթուճ ալըրմադը-
զըն իտարէյն զիֆալէթ իտար, լաթին
հաթիլաթա ասաթ ալաշընա օնաթ քարա-
նըն վէրիլմէլթիլիլիլի ճիլթիլ վէ էս-
պապ տա արանըլմալը տըր. Պիղ, պիր թիւն
գապահաթիլ ճէմաթիլմըլըն ասուղուրդ-
լըլընտա, ֆիթուրըլըլընտա պուլաթա-
եղլ, գապահաթիլն պէլթիլ օլուն զարմ,
ճէմաթիլ չիմալիլ գաթար Կ-Կաթողիկէլիլ
եազլաշարմաթաթա, ըսնարմաթաթա,
ճէմաթիլն հազիլը վէ բէք սաթէ արզուլա-
լը գարշըրընա, «եալընըլ պէնիլ վէ եալաթա
պիլիլմ ալթիլիլիլիլ օլաճադ արը» կիպի
սըրֆ իտաթա լիլ, սէտոն չէլթիլթիլիլ
պուլըլըլըլ, ճէմաթիլն, Կ-Կաթողիկէլիլ
վէ թէլթիլթիլթիլ ընա ըսնարըլ, եազլաշ-
տըլը կրեն էմիլիլ քի, Գալստեաններ Գեոր-
յարգիլիլիլն արզուլը, թէլթիլ թէմա-
միլիլ վէ պէլթիլ տէ ֆաղաթըլա իճրա օ-
լունաճադ տըր։

Ի Խ Թ Ա Ր

Իսթանպուլտա վէ թալաթա զա-
գէթամըլա ապօնէ օլան վէ ապօնէլը
միւրտոնէլթիլիլ խիթամ պուլան զէվա-
թըն, պպօնէլը պէտէլթիլիլիլ կէօն-
տէլթիլթիլիլ ընա իտէլթիլ։

Ի Տ Ա Ր Է Խ Ա Ն Է
Պէյօղլուհա Թագսիմ հաջեհմեհ Ն. ԵՏ
Միւսիքը մեհուլը դադերա
ԹՕԼԱՑԵԱՆ